**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1**
**19.12.2023թ. կնքված N ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-24/9-1 ծածկագրով պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրի**

**ք. Երևան** «31» 01 **2024թ.**

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմն՝ ի դեմս աշխատակազմի ղեկավար-գլխավոր քարտուղար Դավիթ Առաքելյանի, ով գործում է աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և «Ագրոսյա» ՍՊԸ-ն՝ ի դեմս տնօրեն Սարգիս Չոլյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, (երկուսը միասին այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 2323-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ մասը, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2018 թվականի մարտի 20-ի թիվ Պ-3 պաշտոնական պարզաբանման 1-ին կետի 1-ին ենթակետի «բ» պարբերությունը, 19.12.2023թ. կնքված ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-24/9-1 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.15 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին ապրանքի մատակարարման նպատակով հաստատել Պայմանագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 3-ով սահմանված ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը նոր խմբագրությամբ՝ համաձայն կից ներկայացված Հավելված N 1-ի:

1.2 Համաձայնագրի (Պայմանագրի) պայմանները կիրառվում են Պայմանագիրը կնքելուց հետո մինչև դրա հիման վրա Համաձայնագիր կնքելը կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում Պայմանագիրը կնքելուց հետո, մինչև դրա հիման վրա Համաձայնագիր կնքելը, Վաճառողի կողմից ապրանքի մատակարարման դիմաց վճարումն իրականացվում է Համաձայնագիրը, ինչպես նաև Պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

## 2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 3 էջից, հայերեն՝ կնքված երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Համաձայնագրի Հավելված N 1-ը համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը:

**3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| **Գ Ն Ո Ր Դ** | **ՎԱՃԱՌՈՂ** |
|---|---|
| **ՀՀ ԱԺ աշխատակազմ** | |
| **ք. Երևան, Բաղրամյան պող.19** | |
| **ՀՎՀՀ 00008519** | «ԱԳՐՈՅԱ» (ՍՊԸ) |
| **ՀՀ ՖՆ գործառնական վարչություն** | Ամերիաբանկ ՓԲԸ N 1570027341740100 |
| **Հ/Հ 900011020089** | ՍԱՐՅԱՆ ՓՈՂ. 19-21 ԹԻՎ 3 ՏԱՐԱԾՔ |
| **ՀՀ ԱԺ աշխատակազմի** | ք. Երևան Սարյան 19-21, թիվ 3 տարածք |
| **ղեկավար-գլխավոր քարտուղար** | 02669143 |
| **Դավիթ Առաքելյան** | Տնօրեն՝ Սարգիս Չոլյան |
| ------------------------------------ (ստորագրություն) Կ.Տ | ------------------------------------ (ստորագրություն) Կ.Տ |

Հավելված N 1
«19» դեկտեմբերի 2023թ. կնքված
ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-24/9-1 ծածկագրով պայմանագրի
« 31 » « 01 » 2024 թ. կնքված Համաձայնագիր N1-ի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| ապրանքի | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Անվանումը /4267/ | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2024թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | **Ընդամենը** |
| 1 | 41111100/508 | ըմպելու ջուր | 770000 | 770000 | 770000 | 1155000 | 1155000 | 1155000 | 1925000 | 1925000 | 1925000 | 3850000 | 3850000 | 3850000 | **3850000** |

**ԳՆՈՐԴ**

**ՀՀ ԱԺ աշխատակազմ**
**ք. Երևան, Բաղրամյան պող.19**
**ՀՎՀՀ 00008519**
**ՀՀ ՖՆ գործառնական վարչություն**
**Հ/Հ 900011020089**
**ՀՀ ԱԺ աշխատակազմի**
**ղեկավար-գլխավոր քարտուղար**
**Դավիթ Առաքելյան**

---------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

«ԱԳՐՈՍՅԱ» (ՍՊԸ)
ԱմերիաԲանկ ՓԲԸ N 1570027341740100
ՍԱՐՅԱՆ ՓՈՂ. 19-21 ԹԻՎ 3 ՏԱՐԱԾՔ
ք. Երևան Սարյան 19-21, թիվ 3 տարածք
02669143
Տնօրեն՝ Սարգիս Չոլյան

---------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ